

1. Ինչպե՞ս կարող եմ մասնակցել Արշավին:

Դեկտեմբերի 25-ից փետրվարի 28-ը ներառյալ կատարեք միանվագ առնվազն 10.000 ՀՀ դրամի գործարք Mastercard-ով Google Pay վճարային համակարգով և ստացեք կինոյի 2 տոմս:

2. Ե՞րբ ենք տեղեկանում և ստանում կոդը:

Կողերն ուղարկվում են հունվարի 13-ից սկսած յուրաքանչյուր ուրբաթ՝ մինչ նախորդող երեքշաբթի կատարված գործարքի համար: Եթե գնումը կատարել էք երեքշաբթիից հետո, ապա կոդը կստանաք հաջորդ շաբաթվա ուրբաթ օրը:

3. Ինչպե՞ս պետք է տեղեկանամ, որ դարձել եմ Արշավի մասնակից:

Յուրաքանչյուր ուրբաթ կստանաք SMS հաղորդագրություն, որտեղ ներառված է տոմսի կոդը, որը կարող էք օգտագործել մինչ 2023թ-ի մարտի 31-ը ներառյալ:

4. Յուրաքանչյուր ուրբաթ կարո՞ղ եմ կոդ ստանալ:

Յուրաքանչյուր քարտ Արշավին կարող է մասնակցել 1 անգամ (ներառյալ՝ կից և հավելյալ քարտերով կատարված գործարքները):

5. Բոլոր գործարքները կարո՞ղ են մասնակցել հաշվարկին:

Քարտից քարտ փոխանցումները, քարտից այլ հաշիվ փոխանցումները, կոմունալ վճարումները /ներառյալ հեռահաղորդակցման, հեռուստատեսության, ինտերնետ ծառայությունների վճարները/, հաշիվների, քարտերի, էլեկտրոնային դրամապանակների համալրումները, վարկի մարումները, խաղատների և շահումով խաղերի խաղադրույքների, վիրտուալ խաղատների և խաղադրույք ընդունող ընկերությունների հաշիվների համալրումները, պետական մարմինների ծառայությունների դիմաց վճարները, տուրքերը, տուժանքները, օրենքով պարտադրված հարկերի վճարները, մուծումները, այլ վճարները և Բանկի ներքին համակարգերով իրականացված գործառնությունները չեն մասնակցում անկանխիկ գործարքների հաշվարկին:

6. Ո՞վ կարող է դառնալ Արշավի մասնակից:

Արշավին կարող են մասնակցել 18 տարին լրացած ֆիզիկական անձ, ՀՀ ռեզիդենտ հաճախորդները, բացառությամբ Բանկի աշխատակիցների:

7. Եթե իմ քարտը արտարժույթային է, ինչպե՞ս է կատարվելու հաշվարկը:

ՀՀ դրամ արժույթով քարտերի դեպքում անկանխիկ գործարքների ծավալների հաշվարկը կատարվում է հաշվեգրված գումարի դրամային արտահայտությամբ, իսկ արտարժույթային քարտերի դեպքում՝ քարտի արժույթով հաշվեգրված գումարը փոխակերպված դրամի հաշվեգրման օրվա համար սահմանված ՀՀ ԿԲ փոխարժեքով: